«Դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2025 թվականի N _____-Ն

ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները 2.5 դրամ (առանց ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ))՝ դրոշմավորման յուրաքանչյուր ծածկագրի տրամադրման համար, բացառությամբ սույն որոշման 3-րդ կետին համապատասխան հաշվարկված՝ դրոշմավորման ծածկագրերի քանակի, որոնց տրամադրման գինը հաստատել 0.01 դրամ (առանց ԱԱՀ)։

2. Սույն որոշման 1-ին կետով հաստատված՝ դրոշմավորման ծածկագրի տրամադրման գինը կիրառվում է 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներկայացված՝ դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա տրամադրվող դրոշմավորման ծածկագրերի նկատմամբ։

3. Սահմանել, որ դրոշմավորման ծածկագրերի տրամադրման 0.01 դրամ (առանց ԱԱՀ) գինը կիրառվում է հարկ վճարողի՝ ներկայացված դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա 2025 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ տրամադրված դրոշմավորման ծածկագրերի քանակի և 2.5-ի հարաբերության արդյունքում

ստացված քանակի նկատմամբ։

4? Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից։ Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո նոր գին հաստատված չլինելու դեպքում մինչև դրա հաստատումը շարունակվում է կիրառվել սույն որոշման 1-ին կետով հաստատված 2.5 դրամ (առանց ԱԱՀ) գինը։